

Գրայտարներ բոլոր յեւկրների միացե՛ք!

ՓՈՔՐԻԿ ԳՐԱԴԱՐԱՆ № 5

գ. ՄԵՍՅԱՆ




# ԱԻԹ-ՃԻԹԸ



ՊԱՏԿԵՐԱԳԱՐ

ԲԻՖԼԻՄ — 1927

891.99 | 30944  
JF-64 | ՄԵԿԱԿ, 9  
ԺԻՐ - ԺԻՐԸ:  
— 9m.



Հայ

Դիմում ըստ պահանջման

Պայմանագրեալ բայուր յեւկըների միացե՛ք!

ՓՈՔՐԻԿ ԳՐԱԴԱՐԱՆ № 5

891.99-93

Ա-64

Գ. ՄԵՍՅԱՆ




ՎՐԱՆԱՑ Հ 1981 թ.

Ա Ի Թ Ե Շ Ի Թ Ե Բ

ՊԱՏՄԱԿԱՆ

ՊԱՏԿԵՐԱԳԱՐԴ



ԹԻՖԼԻՍ—1927

Գրառեալիար № 1824.

*Spurred 2500.*

Թէ լինաւ, Ժ.Տ.Գ.Խ., զուիզը պարեստի 4-ր տար, զուշկ փող. № 3.

# ՃԻԹ · ՃԻԹ Ը

## I

Վեց, կամ յոթ տարեկան հազիվ կլինելի յես  
այն ժամանակ։ Մի չտեսնված չարաճնի եյի։  
Չարաճնին քիչ ե—մի կատարյալ «ավերիչ»։ այս-  
պես եյին ասում, գոնե մեր տանն ու հարեան-  
ները իմ մասին, թեև յես այդպես չեյի համա-  
րում ինձ։ Տանը բոլորն ել իրավունք ունեյին ինձ  
վրա, վորովհետեւ ամենից փոքրը յես եյի և վար-  
ձաւում եյին՝ ով ինչով կարող եր, սկսած մեր  
ծառա Սարգսից։

— Ես ով ե եսպես արել, Համո—խեթում եր  
վրաս մեծ յեղբայրո, Դանելը, ցույց տալով իր  
վոտքի կապիչներից մինի կեսը, մի փայտի ծայ-  
րին մեխած։ Մոռումս կախում եյի, ունքերս հա-  
վաքում իրար—գիտեյի հետևանքը… Հանդարտ  
մոտենում եր նա. զսպված զայրույթից նրա քթա-  
ծակերը ալիք եյին տալիս. վոլորում եր ձեռքն։  
ընկած ականջո, բարձրացնում, մինչև վոր վոտ-

քերս կտրվում եյին զետնից, յես կախված նրա  
բռունցքից:

Յես եյի մարակ շինել:

— Ես քու բաներդ չի... զայրույթից կարմը-  
րած հրում եր ցուցամատի ծնկով ճակատիս հայրս  
ցույց տալով բերանը ջարդած կացինը կամ ու-  
րագը:

Յես եյի տաշ արել:

— Դու տափը չմտնես, բա... խլում եր սայլս  
ձեռքիցս ու հարվածների տակքաշ տալով հասցնում  
մորս մոտ մեծ քույրս, Աղիքը, ցույց տալու հա-  
մար, թե վոնց յես իլկի լիսեռնը ակն եյի շինել  
սայլիս համար, իսկ իրենք յերկու որ ե փնտրում են:

— Մեծ ազի, յես սրան կսպանեմ, վոր մին-  
ել տեսնեմ գոմումը. դարմանն ենտեղով մին են  
արել, ցախավելը քաշ-քաշ արել կոտրատել, թե  
ցախն ենք անում—սպառնում եր Սարգիսը, մեր  
տավարածը:

Մերոնք բավական չեյին, պակասը լրացնում  
եյին հարևանները: Լուսը բացվում եր թե չե-  
դալիս եյին իրար յետևից.

— Աղչի, ձեզ մատաղ, խալին ել յերեխա-  
ունեն, թե մենակ ձերն ա. ես ի՞նչ ա արել, ցույց  
եր տալիս աղի պատուած շապիկը: Ի՞նչ եյի  
արել, կոխ եյինք կացել:

— Յես սրա տերը չեմ, Անթառամ, քե մա-  
տաղ, շպրտում եր մորս առաջը գցում նվա-

դած հավը։ Մեղավոր Եյի, վոր քարս դիպել եր «սպատահմամբ»։

— Աղջի, մին հենց քու ախպերը ապրի, դուրս յեկ մին տես մեր վորցակի հալը։ Ի՞նչ եր վորցակի հալը։ Լողացրել Եյի առվակումն ու բաց թողել. ու եսպես անվերջ… Փուշ Եյի դառել բոլորի աչքին։ Որը մին եր՝ ես տեսակ դեպքերը՝ հարյուր։ Յեվ ամեն անգամ, ամենը իր ուղած ձևով դատաստանս տեսնում եր. ով եր ձեռները բռնողը։ Նրանց ծեծին ել, կասես, սովորել Եյի, լաց չեյի լինում, բայց հո, ամեն անգամ չեր հաջողվում լուռ տանել բոլոր։ Սրա փոխարեն վրեժս ընկերներիցս Եյի հանում խաղի ժամանակ։ Բայց այս ել միշտ չեյի մարսում. շատ հաճախ իմ ձեռքով ծեծվածների տնից հասակավորները համոցանում Եյին ինձ, ինչպես հարկն եր ու յես որորվելով, թնդինդալով դալիս Եյի դեպի տուն՝ թթված, արցունքներով…

— Հը՛, կերածը, անուշ Ե՛ր, ոձի ճուտ, դիմավորում եր մայրս հեղնական ժպիտը աչքերում—լավ են արել քեզ մատաղ, բեր տեսնեմ ձեռքդ են կոտրել, թե՞ վոտդ. դալար կենան դրա խփողի կոները, բա ընչի՞ յեն քիչ խփել։ Լոռում Եյի։ Ել վոնց լաց լինեյի, վոր չեյին ցավակցում։ Գուցե և հենց այս եր պատճառը, վոր դրանից հետո աչք չեյի ճպում, թեկուզ զլխիս թարս ջաղաց աղային, արցունքի կաթիլ չեր կաթում՝ ինչ

ել անեյին։ Մի բան չեյի կարողանում հասկանալ, թե ինչով եյի մեղավոր յես, վոր ամեն բան հետաքրքրում եր ինձ—սայլն ել, ձին եր, յեզն ել, մյուս կենդանիներն ել, մեծերի գործիքներն ել, վոր նրանց նման յես ել եյի ուզում շինել, տաշել, լծել, հեծնել... Բայց իրանց համար ամեն բան կարելի յեր, ինձ համար՝ չե։ Ինչու իմ արածս վատ եր, նրանցը՝ լավ—չեյի հասկանում, չեյի հասկանում... Յերբ մենք մի եշ եյինք գտնում ու չորս, հինգ հոգով շարվում պաշից մինչև ականջները՝ վորոտում եյին—«Եհեյ, եղ հեյվանին ինչի՞ յեք չարչարում, կղամ, հո զիտեք...»։ Իսկ վոր իրենք եյին չորս կուժը վրան զցում, միջին ել նստում, կամ ջաղաց քշում բեռան տակ տնքալով, հարվածը հարվածի հետեւց՝ են ժամանակը «լավ» եյին անում... Մի խոսքով մենք իրար չեյինք հասկանում։

Միակ հաշտ անձնավորությունը են տանը, վոր միշտ որտացավ եր ինձ համար, վոր միշտ բռնում եր թախս, դոգը քաշում, համբուրում ծեծված թշերս, սրբում կաթող արցունքներս՝ դա տատո եր. մի բարի, մի աննման կինու նա վոչ բարկանալ գիտեր, վոչ անիծել. ամեն ինչ աղաչանքով եր ասում, ինպրելով, «քե մատաղը» բերանին։ Խլում եր ինձ—թե վոր մոտիկ եր լինում—հարձակվողների ձեռքից ու իր հովանավորող թևերի տակ առնում, բարկանում բո-

Երի վրա, ներում ու արդարացնում իմ արածա:  
Յեվ եղքան ծեծն ու պատիժը ենքան չեյին  
ճնշում ինձ, վորքան թևավորում եր տատիս  
հովանավորությունը:

Բայց շատ անգամ իմ ու տատիս մեջ ել  
եր թյուրիմացություններ պատահում, և եղ  
թյուրիմացությունը զլիավորապես թոշունների  
համար: Տատո չեր սիրում, վոր բոլոր խաղա-  
լիքներից ու զբաղմունքներից ամենասիրելին  
ու հետաքրքիրը ինձ համար՝ թոշուններն եյին  
ու նրանց բները: Գյուղում վոչ վոքի այնպես  
չեյի նախանձում, ինչպես նորածե տուն ունե-  
ցողներին, վորոնց տանիքների տակ ամեն զար-  
նան բազմաթիվ բներ եյին հյուսում սարյակ-  
ներն ու ճնճղուկները: Մեր տունը հողե տուն  
եր. նրա սրահում ունեյինք միայն մի յերկու  
ծիծեռնակի բուն: Ինչի՞ս եյին պետք: Նրանց  
անեծքների մասին այնպիսի բաներ եր պատմել  
տատո, վոր՝ ով եր զլիից ձեռք վերցրել խեթ  
նայելու նրանց բներին: Մնացած թոշունները  
վայրի եյին ու նրանց բներն ել գյուղից դուրս,  
թփերի մեջ ու ծառերի վրա. Բայց և այնպես  
որ չեր անցնում, վոր ձեռքս թոշնի ձագեր  
չընկնեյին: Ժամերով նրանց համար մորեխ եյի  
փնտրում, որերով բներ վորոնում: Բայց եղ-  
քանից վոչ մեկն ել արթնանալով՝ եղար կեն-  
դանի չեյի տեսնում: Մի սև կատու ունեյինք.  
անտերը բոլորիցն ել դատարկ եր թողնում ինձ:

— Քե մատաղ, Համո ջան—աղաչում եր  
տասու ճուտեր մի բռնիլ, մեղք են, ջանիդ մա-  
տաղ, նրանք ել իրենց մոր բալաներն են՝ կանի-  
ծեն քեզ:

— ԶԵ, տատի, ծտերը չեն անիծում, ասում  
եյի, մենակ ծիծեռնակներն են անիծում, յես  
նրանց ձեռք չեմ տալիս:

— Ծտերն ել են անիծում, քե մատաղ, ձեռք  
մի տալ. բա իրանց բալաներին վոր տանեն, չեն  
արիծի. բա դու իմ բալան ես, վոր քեզ գան ին-  
ձանից խլեն, տանեն, չեմ անիծիլ...

— Բա կանիծէս, Նանի

— Բա ի՞նչ կանեմ, քե մատաղ:

— ԴԵ, դու կանիծէս, Նանի, ամմա ծտերը  
չեն անիծում. դու չասացի՞ր, թե մենակ ծիծեռ-  
նակներն են անիծում:

Տասս մի անգամ պատմել եր, թե ինչպես  
Շուշի տասր, յերեխա ժամանակ շարունակ ծի-  
ծեռնակի բներ եր քանդում. նրանք ել ենքան ա-  
նիծեցին, ասում եր, վոր մի անգամ ել՝ յերկար  
ձողով բուն քանդելիս՝ ոճորքից մի բան ընկավ  
նրա աչքը ու, կուրացավ: Եղ, նրանց անեծքն  
եր, ասում եր, նրանց մեղքիցը, վոր են խեղճ  
թոշունները չարչարվում ին որ ու դիշեր յեր-  
կուսով՝ բուն շինում, ձու ածում, ճուտեր հա-  
նում, ու նա դալիս եր խփում, բունը քանդում,  
ճուտերը վեր ածում, կատվերեց անում:

Ո՞վ եր ականջ դնողը նրա աղաչանքին ու  
խրատներին վոր. վախենում եյի մենակ ծիծեռ-  
նակներից, ու նրանց բներին ել ձեռք չեյի տալիս:

## II

Գարունքն եր: Տավարը մինչև սար գնալը  
Աղբբի-Զորի գոմերումն եր: Տասս կովերն եր կը-  
թում, յես ել նրա մոտ եյի, իբր թե հորթարած:

Մի առավոտ, հորթերի յետեկից գնալիս մի  
«Ճիթ-ճիթի» բուն գտա՞ հինգ սիրուն, բայց դեռ

շշահացած ձագեր մեջք:  
Ուրախությունից համբե-  
րությունս պահել չկա-  
րացի. բարձրացա մի քա-  
րի գլուխ ու սկսեցի ձեռ  
տալ ընկերներիս.

— Հե՛ռ՝ Գասի, հե՛ Վարդո՞ն... մի բուն  
Եմ գըտե՛լ, մի բուն, մի բուն...

Գասին ու Վարդոն ինձանից պակասը չեյին.  
մեռած եյին բնի համար. անունը լսելուն պես,  
հորթերը թողին՝ գլխապատառ, ձեռքները յետ ու  
առաջ անելով, իրար առաջ կտրելով, ընկնելով,  
բարձրանալով՝ թոան դեպի ինձ:

— Վորտեղ ե, Համո ջան, վորտեղ, վորտեղ...  
հարցնում եյին նրանք անհամբեր ու վազում:  
Նրանց պատասխանելու փոխարեն թոշկոտում  
եյի անդադար ու նկարագրում ձագերը.

— Մի լավ են, մի լավը՝ մի լավը...



— Համո ջան, մինն ինձ չես տալ..., մինն  
ինձ...

— Համո ջան, մինն ինձ չես տալ, չես տալ...  
Աղաչանք, պաղատանք, խոստումներ են,  
վոր անում են, թե ինչ ե՞նի տեղը նրանց ել  
ցույց տամ. բայց դե գծել եմ:

Մենակ, յերբեմն մեկին, յերբեմն մյուսին  
խոստանում եյի ձագերից մինը տալ. Իմ նկա-  
րագրությունս ու ուրախությունս ավելի յեր  
տանջում նրանց:

Յեթե առավոտվա կթի ժամանակը չլիներ  
ու հորթերի ծծելու յերկյուղը՝ գուցե վոչ մի բա-  
նով ել Գասին ու Վարդոն ինձանից չհեռանային:

### III

— Ի՞նչ անեմ, թե զնում եմ մեկ ել տես-  
նեմ ձագերը, մտածեցի նրանցից բաժանվելուց  
հետո. Մտածեցի ու սիրոս չհամբերեց. քայլերս  
ողղեցի դեպի բունը. Վոր թփին մոտեցա, ավելի  
ծանրացրի քայլերս ու սկսեցի վոտքերիս ծայ-  
րերովը զնալ. Շունչս ինձ քաշեցի. սիրոս սկսեց  
արագ բարախսել—յես ուզում եյի մորը բոնել  
բնի մեջ. Մոտիկ թփից հանկարծ մինը թուավ.—  
Ճը՛թ-ճը՛թ, ճը՛թ ճը՛թ...

Դա մայրն եր:

Մի անհայտ յերկյուղ միանդամից ինձ կա-  
լավ. Ըսկերներիցս նկատվելու յերկյուղը մի կողմից,  
սրտիս արագ բարախումն ու մոր անընդ-

հատ ճըթ-ճըթոցը մյուս կողմից, միախառնված շինթեցին։ Յես չեյի կարողանում վորոշել՝ հետ դառնամ, թե առաջ գնամ։ Վախենում եյի մոր անվերջ ճըթ-ճըթոցը մատներ ուրիշներին բնի աեղը։ Առաջ շարժվեցի։ Ամեն մի քայլիս հնատ մայրը ավելի մոտ եր թուչում, ճըթ-ճըթացնում, աղմկում։ Ինքս ինձ հաշիվ տալ չեյի կարողանում։ Մի քայլ ել արի. ձեռքս մեկնեցի դեպի թուփը, վորի մեջ բունն եր։ Զեռքիս խշշոցի հետ ձագուկները մեկնեցին իրենց վզները, լայն բայ արին գեղին սիրուն կտուցները և միաձայն ճըթ-ճըթացին...

Մի բան զարկեց զլխիս և ավելի մոտ, ու ուժեղ լսեցի մոտ հուսահատական ճըթ-ճըթոցը։ Գլխարկս բարձրացավ. մազերս բիզ-բիզ եյին կանգնել։ Այժմ համոզված եյի, վոր նա ինձ անիծում ե։ Կարծես՝ յետ փախչել ել վախենում եյի. մի անորոշ ձայն բոնել եր ականջներս ու թշում զլխիս մեջ։ Զդացի յերկրորդ հարվածը, յերրորդը, չորրորդը...

Այժմ պարզ գիտեյի, վոր մայրն եր թևահարում ինձ։ Յես ինձ նրանից թույլ եյ զգում այդ բոպեյին։ Վոտքս յետ դրի, վոր հեռանամ, վոքրիկ հերոսը նորից հարձակվեց ինձ վրա—կարծեց թե ձագուկները տանում եմ հետու Գլուխս ցածրացրի, ձեռքերս բարձրացրի պաշտպանվելու, և հանկարծ ձեռքս ընկավ նա, ճիթ-ճիթը։ Թե ինչ-

պես վայրկենական փոխվեց են ծանր դրությունով՝ դեռ մինչև հիմա ել չդիտեմ։ Լոեց ճըթ-ճըթոցն ու թևահարոցը ու մի ուրախ բացականչ դուրս թռավ իմ ըերնախց։

— Զան, ջան, ձիթ-ձիթը բռնեցի, ձիթ-ձիթը բռնեցի…

Այլևս վոչ նա յեր ձայն հանում, վոչ ել թե յես եյի վախենում։



Բռունձքս կրծքիս սղմած, մերթ համբուրելով, մերթ յերեսիս քսելով՝ շնչակտուր ներս ընկլա բինան։

— Նանի, նանի, ձիթ-ձիթը, ձիթ-ձիթը, այ…

— Վույ, քե մատաղ, Համո, ճուտամեր կը-

լինի, բաց թող, ջանափառ մատադ նանը, մեղք են  
դրա ճուտերը:

— Թող եստեղ կենա...

Թելով կապեցի սյունից, տեղավորեցի կաթ-  
սայի տակ ու դուրս թռա: Քիչ հետո բունն ել  
իրա ձագերով մոր մոտ եր:

#### IV

Յերկու բոսկե չանցած՝ ամբողջ թաղի յերե-  
խեքը շուրջս եյին հավաքված: Բոլորը նախան-  
ձում եյին ինձ: Վոչ մի անեծք, վոչ մի սպառ-  
նալիք ու խոստում չկարաց վոչ նրանց ցրի մեր  
դունից, վոչ ել թե ինձ հորթերը ուղարկի:

Ել ուր եյի զնում: Առաջ վոր զնում եյի  
շատը լների ու ձագերի համար. հիմա հո, բունը  
կողքիս. եր, ճիթ-ճիթն ել ձեռքիս: Վերջը ելի  
տասս հնարը գտավ. խաթրս առավ, աղաչանքով  
համոզեց, վոր ինքը կինամի ճիթ-ճիթիս, իսկ  
յես զնամ հորթերը:

Մի քթոցում, խոտի մեջ տեղավորեցի բունը  
ձագերով: Կապեցի մոր թելը քթոցի ճիպոտից ու  
բերանն ել ծածկեցի մի բարակ շորով, վոր սիրաը  
չճաքի: Նա այլս ձագերին չեր նայում, բնումը  
չեր նստում. հեռում եր անդադար ու սիրաը բա-  
րախում անասելի արագությամբ:

Այդ ամբողջ որը յես հանդի շատ տիուր  
եյի. սկզբի ուրախությունս կամաց-կամաց ան-  
հետացավ: Հիշեցի, թե ինչպես ինձ անիծում եր

Ճիթ-ճիթը. հիշեցի նույնպես, թե վորքան անմեղ ձագերի մահվան պատճառ ելի դարձել:

— Յերանի թե բանած չլինելի, մտքովս անցավ հանկարծ:

Տասս մի անգամ պատմել եր, թե մի կին մի ծտի լեզու յեր կտրել՝ ու նրա վորդին ել անլեզու յեր յեղել: Ես պատմությունն ել հիշեցի եղտեղ: Հիշեցի են ել, վոր ասում եր շարունակ, թե անլեզուների տերը ամենից հզոր ե ու նա հսկում ե նրանց, լսում նրանց անեծքը ու միշտ կատարում: Ես բոլոր մտածնունքներից հետո սիրոս մի տեսակ վատ դառավ ու իմ մեջ հաստատ վճռեցի, վոր յերեկոյան, յերբ վերադառնամ, անպատճառ յերեք անգամ պտուտ տամ զլխովս ու բաց թողնեմ ճիթ-ճիթին, բունն ել տանեմ, դնեմ տեղը, վոր նորից որհնի ինձ:

## V

Յերեկո չդառած՝ տուն յեկա եղ որը: Սաստիկ անձրեսից ամբողջովին թրջվել, վողողվել եյի: Ներս մանելուն պես, վաղեցի դեպի քթոցը, բայց նրա բերանը ծածկած չեր այլնս:

— Նանի...

— Անտեր անեմ կատուն, Համո, տանը չեմ յեղել... սկսեց տասս, բայց յես ել ինձ պահել չկարացի. արտասունքներս խեղդեցին ու թափվեցին միանգամից:

Փոված եյին խեղճերի վետուրները: Կապած

թելի ծայրին եր մնացել նրա մի վոտը։ Տասո  
զուր եր աշխատում ինձ միսիթարել։ Զեյի կարո-  
ղանում մի բոպե անդամ մոռանալ խեղճ թռչնի  
վերջեն հուսահատ ու ցավալի աղաղակը։ Հեյի  
մոռանում նրա անեծքը։

Ինչքան աղաչեց տասո՞ թույլ չովի շորերս  
փոխեն, մինչև վոր քունս տարավ եղակես։

## VI

Ել չգիտեմ, ինչ եր յեղել։  
Աչքս վոր բաց արի՞ տեսնեմ անկողնուս



մոտ տասս ե նստած, ձեռքն ել դրած ճակատիս։  
Ուրիշ կտնայք ել կային։ Նա հենց ծածկում եր  
շարունակ ինձ ու հուսագրում։

— Կլավանաս, քե մատաղ, կլավանաս, մի  
վախի...

Յես հիվանդացել եյի, և ասում եյին, թե  
մի քանի որ եր արդեն:

— Տապի, վոր լավանամ, ել բնել չեմ քանդի.  
յեղավ իմ առաջին խոսքս:



A  
5721  
20944

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0041337

*Համ*  
ԳԻՆ 15 ԿՈՎ.

5721

ՄԵԿ  
ՕՐԻԵԱԿ

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՆՈՒՅՆ ՀԵՂԻՆԸՆԻ ՀԵՑԵ  
ՄՇՆԿԵՆԵՆ ԳՐԱՓԻՑԻՆԵՐԸ

«Փոքրիկ գրադարան»

№ 1.	Բաղալը . . . . .	25	կուլ.
№ 2.	Խրճիթում . . . . .	15	»
№ 3.	Վանիկը . . . . .	15	»
№ 4.	Մայրը . . . . .	15	»
№ 5.	Ճիթ-Ճիթը . . . . .	15	»

Վաճառվում են հայ գրավաճառանոցներում.  
Գումարով գնողներին զեղչ  $20^0/₀$ ,

Հեղինակի հասցեն. Տիֆլիս, улица Жуковского,  
д. № 10.